

## ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԷԶԵՐԻՑ ՄԵԿԸ

ԱՍ. ԱՍԱՏՐՅԱՆ

Հայտնի է, որ հայ մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Միք. Նալբանդյանի երկերի մի նշանակալից մասը հեղինակի կենդանության օրով տպագրվել է այլևայլ ծածկանուններով: Բայց հարկ է հիշել, որ մինչև մեր դարի 30-ական թվականների սկիզբը Նալբանդյանի օգտագործած, առաջին օրինակ հասարակությանը ծանոթ ծածկանուններից հայտնի էին միայն մի քանիսը, այն է՝ հոշակավոր Կոմս Էմմանուելը և «Հիշատակարան»-ում հանդիպող նրա մի քանի «թղթակիցների» անունները (Սերովբե խաչատուրյան Շահբեգ, Մեսրոպ Տիրաաուրյան, Աբրահամ Դիոսկորոսյան Բարկենյանց և այլն), ինչպես նաև Սիմոն Մանիկյան ծածկանունը, որով տպագրվել էր Նալբանդյանի գլուխ գործոցը «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկը:

Հայկական ՍՍԽ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը Մ. Նալբանդյանի «Անտիպ երկեր»-ում (1935), իսկ հետագայում բանասեր Նշան Մուրադյանը՝ Մ. Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածու»-ի առաջին երեք հատորներում, բացահայտեցին նոր ծածկանուններ, որոնցով ստորագրվել է 1859—1860 թթ. «Հյուսիսսփայլ»-ում տպագրված նրա հրապարակախոսական երկերի մի զգալի մասը: Պարզվեց, որ բացի վերոհիշյալ ծածկանուններից Նալբանդյանը «Հյուսիսսփայլ»-ում օգտագործել է մի շարք այլ անուններ էլ. դրանք են՝ Մատուր Պողոսյանց (1859, № 10, էջ 808—810), Մարտիրոս Սառաֆյանց (1859, № 10, էջ 810—821 և № 11, էջ 902—903), Ադուլֆ Բլումենթալ (1859, № 11, էջ 903—906), Սարգիս Տեր-Միքայելյան Վարչամյանց, (1860, № 11, էջ 384—396), Ա. Ա. Ե... (1861, № 9, էջ 221—225), Ալֆոնզո Ռաթթի (1861, № 10, էջ 301—330) և, վերջապես, Փառախոտ Յուլիանց (1861, № 4, էջ 225): Սա է բազմազան ծածկանունների այն շարքը, որ բացահայտել են սովետական շրջանի Նալբանդյանագետները, որոնց շնորհակալ աշխատանքի արդյունքներն ամփոփված են Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի առաջին գիտական քառահատոր հրատարակության մեջ (1941—1949): Այսպիսով մեծ ռևոլյուցիոնների առաջին հայտնի ծածկանունների թիվը 10-ից ավելի է: Դիշտ է, դրանցից մեկ-երկուսը գեո վերաբնություն ու վերահաստատման կարիք ունեն, բայց դրանց մեծ մասի՝ Մ. Նալբանդյանին պատկանելու հանգամանքն անհերքելի է:

Սրանից վեց տարի առաջ «Գրական թերթ»-ում<sup>1</sup> հրապարակած մեր մի հոդվածում («Նալբանդյանի ծածկանունների հետքերով») մենք, մեր որոնումների նախնական արդյունքների հիման վրա, այն կարծիքն ենք հայտնել, որ «Հյուսիսսփայլ»-ի դեռ չբացահայտված ծածկանուններից մի քանիսը (Կամսար խաչատուրյան, Կիրակոս Մարգարյան, Մարտիրոս Ասլանբեգ, Պողոս Ղուկասյան, Մատուր Չելեպի և այլն) ամսագրի գլխավոր աշխատակցի՝ Միք. Նալբանդյանի ծածկանուններից են:

Հետագա քննարկմանը թողնելով մասնավորապես «Հյուսիսսփայլ»-ում Նալբանդյանի գործածած վերոհիշյալ նորահայտ ծածկանունների հարցը, մենք այստեղ փորձում ենք ավելի հանգամանորեն հիմնավորել դրանցից մեկը Նալբանդյանին վերագրելու մեր կարծիքը, ինչ որ հնարավոր չէր 1954 թ. գրած լրագրական հոդվածում:

Նկատի ունենք Կամսար խաչատուրյան ստորագրությամբ «Հյուսիսսփայլ»-ի 1860 թ. հունվարյան ամսատետրում տպագրված «Նամակ» վերնագիրը կրող երկը:

Ա. Մ. Ինճիկյանն իր կազմած «Միքայել Նալբանդյանի կյանքի ու գործունեության տարեգրություն» մեջ, Նալբանդյանի անհայտ երկերի ու նամակների շարքում 1859 թվականի տակ նշում է մի քանի հոդված ու նամակ, որոնք ուղղված են եղել «Հյուսիսսփայլ»-ին, բայց առ

<sup>1</sup> «Գրական թերթ», 1951, հոկտ. 23, № 39:

այսօր անհայտ են մնում: Մեր խորին համոզմամբ՝ ամսագրի 1860 թ. հունվարյան ամսատետ-  
րում տպագրված վերոհիշյալ Պամսար Խաչատուրյան ստորագրությունը կրող «Նամակ» վերնա-  
գրով երկր հենց այդ «անհայտ երկերից» մեկն է: Մա հաստատություն է «Նամակ»-ի թե՛ բովան-  
դակությամբ և թե՛ լեզվի ու ոճի նախնականական առանձնահատկություններով, որոնք ակրն-  
հայտ են դառնում ուշադիր ընթերցողի համար:

Այս ծածկանունը, ինչպես մի քանի այլ ծածկանուններ, Նախնական միայն մեկ անգամ է  
գործածել, և ընդհանրապես այդ անունը «Հյուսիսսփայլ»-ում միայն մեկ անգամ է հանդի-  
պում: «Նամակ»-ի գրության թվականն ու ակոր նշված է. «1859 թ., հոկտեմբերի 26, Թիֆլիս»:  
Տարեթիվն ու ամիս-ամսաթիվը թերևս ստույգ են, բայց «Նամակ»-ի գրության վայրը՝ ոչ,  
քանի որ Նախնական այդ թվականին Թիֆլիսում չի եղել: Հայտնի է, որ 1859 թ. հուլիսի  
ռեզին, վերագրված իր երկրորդ արտասահմանյան ճանապարհորդությունից, Նախնական  
մինչև հոկտեմբերի վերջերը եղել է Մոսկվայում և ապա՝ մեկնել Պետերբուրգ: Այնուամենայնիվ,  
Թիֆլիս տեղանունը մեզ չպետք է շփոթեցնի. դու ծածկագրության համար է, որ հաճախ է կի-  
րառել Նախնական իր մյուս «Նամակ»-հոդվածների համար: Հետևաբար այս «Նամակը»  
գրվել է կամ Մոսկվայում և կամ Պետերբուրգում, արտասահմանյան երկրորդ ուղևորությունից  
վերադառնալուց հետո:

«Նամակ»-ի ենթավերնագիրն է՝ «Սիրելի եղբայր իմ Լուսիկ»: Լուսիկը Նախնականի եղ-  
բայր Լուսեղենն է, որի անվանը հանդիպում ենք Նախնականի մի քանի նամակներում՝ և մեկ  
անգամ էլ՝ «Ծոցատետրի նկատողություններ»-ում<sup>2</sup>:

Ինչպես մյուս ծածկանուններով գրված մի շարք «Նամակ»-հոդվածներում, նույնպես և այս  
«Նամակ»-ում հեղինակն իրեն ներկայացնում է որպես «Հյուսիսսփայլ»-ի հրատարակչի հետ  
անձամբ առնչություն ու մոտիկ ծանոթություն չունեցող մեկը, բայց իբր թե իր եղբոր միջնորդու-  
թյունն է խնդրում՝ «Նամակը» հասցնելու հրատարակողին և հաջողեցնելու, որ այն տպագրվի  
ամսագրում:

«Նամակը» վերջանում է հենց այդ խնդրանքով՝ «Եղբայր իմ Լուսիկ... իմ խնդիրս քեզա-  
հից այն է, որ Լի մերձավոր ծանոթություն ունիս Հյուսիսսփայլի հրատարակող պարոնի հետ,  
ուղարկիր այս նամակս նորան, խնդրելով, որ բարեհաճի նա տպել իմ փոքրիկ գրվածք՝ յուր  
պատվական օրագրի մեջ...»<sup>3</sup>:

Հիշենք, որ «Հիշատակարան»-ում համարյա ճիշտ այդպիսի խոսքերով է դիմում Կոմս  
Էմմանուելին Սերովբե Խաչատուրյան Շահբեկին իր առաջին «Նամակի» սկզբում, ուր ասում է.  
«...այո՛, ցանկանում էի երբեմն-երբեմն տեղեկությունք տալ այդ պատվական օրագրին (այ-  
սինքն «Հյուսիսսփայլ»-ին—Ա. Ա.), բայց երկրայում եմ. մի գուցե պարոն Հրատարակողը տեղ  
չդնի յուր օրագրի մեջ իմ դրած քաների համար: Ես ծանոթություն չունենալով ոչ պ. Հրատա-  
րակողի և ոչ պ. Նախնականի հետ, որ ինչպես տեսնում եմ, պիտո է զլխավոր աշխատակից  
լինի պ. Հրատարակողին, գրում եմ ձեզ այս նամակը այն խորհրդով, որ դուր մի նամակով  
միջնորդ լինեք իմ և Հյուսիսսփայլ օրագրի մեջ, որպեսզի ընդունե իմ աշխատությունքը, եթե  
պատահի ինձ ուղարկել»<sup>4</sup>:

Դրանից առկա քան երկու տարի հետո գրված մի այլ «Նամակ»-հոդվածում (իբրե թե՛  
«ստացված Բաբուլի»՝ «Հյուսիսսփայլ»-ի անունով) այս անգամ Սարգիս Տեր-Միքայելյան  
Վարդանյան հայտնի ծածկանուն ստորագրությամբ՝ դիմելով «մեծապատիվ Կոմս Էմմանուել-  
ին» հեղինակը հայտնում է, թե «Ճռաքաղ» ամսագիրը հարկադրում է մեզ մի երկու խոսք ասել  
անտես, բայց հոգով չափ ծանոթ բարեկամիդ հետ, խնդրելով Ձեզանից բարեհաճել դարձուցա-  
նել Ձեր ուշադրությունը մեր խոսքի վերա», «...խնդրել Ձեզանից, պարոն Կոմս, ոչ միայն տեղի  
ուսլ այս նամակին Ձեր անսշառ Հիշատակարանի մեջ, այլև հրատարակել Ձեր ծանոթու-  
թյամբ...»<sup>5</sup>:

<sup>1</sup> Մ. Նախնական, Երկերի լիակատար ժողովածու (հետադայում՝ ԵԼԺ),  
հատ. 4, էջ 35, 57:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 264:

<sup>3</sup> «Հյուսիսսփայլ», 1860, № 1, էջ 78: Կամսար Խաչատուրյան, Նամակ:

<sup>4</sup> Մ. Նախնական, ԵԼԺ, հատ. 1, էջ 311: Նույնը՝ «Հյուսիսսփայլ», 1858,  
№ 3, էջ 376:

<sup>5</sup> Նույն տեղում, հատ. 2, էջ 296—297, կամ «Հյուսիսսփայլ», 1860, № 11,  
էջ 384—385:

Այսպես, ուրեմն զոհերն բոլոր դեպքերում, երբ նախնականը հանդես է գալիս մի նոր ծածկանունով՝ նա ներկայանում է որպես նախնականին ու կոմս էմմանուելին և կամ «Հյուսիսափայլ»-ի խմբագրին միանգամայն անծանոթ անձ և խնդրում է կոմսին կամ մի այլ անձի միջնորդ լինել իր «նամակ»-հոգվածները «Հիշատակարան»-ում և «Հյուսիսափայլ»-ում հրատարակելու համար:

Ծածկագրության պայմանական այդ ձևը նախնականը կիրառել է նաև մեր ուշագործության առաջին «նամակ»-ում: «նամակ»-ի պատկանելությունը նախնականին կարելի է հաստատել նաև նկատի ունենալով նրա սկիզբը, ուր հեղինակը խոսում է այն մասին, թե իր ուղևորության առիթն ու պատճառն իր առողջական վիճակն է եղել: Ընդ որում այդպես է պատճառաբանում նախնականը նաև կոմս էմմանուելի ուղևորությունը «Մեռելահարցուկ» վեպի է գլխում<sup>2</sup>:

Բայց ոչ միայն «նամակ»-ի սկիզբը, այլև ամբողջը շատ նկատելի բնահանրություններ ունի նախնականի թե «նամակ»-հոգվածների և թե «Մեռելահարցուկ»-ի ու «Հիշատակարան»-ի մի շարք էջերի բովանդակության, նրա արտահայտած մտքերի ու խորհրդածությունների հետ:

Թե «նամակ»-ում և թե «Մեռելահարցուկ»-ի է գլխում հերոսը (վերջինում՝ կոմս էմմանուելը) դուրս է գալիս շրջագայության և հանդիպում տխուր, հուսահատական տեսարանների, ըստ որում երկու դեպքում էլ հերոսն ամենից առաջ հանդիպում է մի հնադարյան ճարտարապետական կոթողի. «Մեռելահարցուկ»-ում՝ «մի պարսպապատ եկեղեցու» (հատ. 1, էջ 567), իսկ «նամակ»-ում՝ «մի հին եկեղեցու», որն իր հոյակապությամբ աչքիցնում է (Ն 1, էջ 71—72): Ինչպես «նամակ»-ում շրջագայողը, այնպես էլ «Մեռելահարցուկ»-ում կոմս էմմանուելը, դիտում է նաև եկեղեցու «ամայի շրջակայքը և բակում եղած բազմաթիվ գերեզմանները», որոնք տխուր խորհրդածությունների առիթ են տալիս, և ծանր տպավորությունների տակ ստիպում նրան արտասվել. «...Տխուր ու տրտում մտածմունքը զայրացուցին կոմս էմմանուելի սիրտը և արտասուքի երկու խոշոր կարիլներ դուրս բուսն ճորտ լցված աշխարհի և թավալվեցան գետնի փոշու մեջ: Այո՛, ասաց նա՝ նույնիսկ յուր արտասուքի ընթացքին...»: Այնուհետև խորհրդածում է «տարագիր ընկած ազգի կամ մասնավոր մարդու արտասուքին...» շուրջը. «...վաղ այն ազգին, այն ժողովրդին, որի արտասուքի համար օտար փոշուց ավելի չկա մի ուրիշ ազնիվ բնությունը» (հատ. 1, էջ 264): Եվ ահա երբ կոմս էմմանուելը գերեզմանոցում հանդիպում է «մի վարսուճամյա, բայց առույգ ծերունու» ու նրա հետ զրույցի բռնվում (հատ. 1, էջ 257—264), հեղինակը նկատում է, որ «կոմս էմմանուելը հուզված, փոխված ձայնով» է խոսում և նրա «արյունը ալեկոծվում էր սրտի և բոկերի մեջ» (էջ 264):

Կամսար խաչատուրյանի «նամակ»-ում հեղինակն ասում է իր մասին. «Իմ կարճատև կեցության միջոցին այս վանքումը՝ արյունի արտասուք էին քափում աշխարհ...» («Հյուսիսափայլ», 1860, Ն 1, էջ 73): Այստեղ էլ հանդիպում է «մի հսկումալ ծերունի», որն իր արտաքին նկարագրությամբ հիշեցնում է կոմս էմմանուելին հանդիպած «վարսուճամյա ծերունուն»՝ «ճաղատ ճակատով և սպիտակ մազերով...» (հատ. 1, էջ 257): «նամակ»-ի ծերունու «...դեմքը երևում էր արյունալեն, ճակատը կնճուռ, մորուքը և գլխի մազերը սպիտակացած, որպես ձյուն» (Ն 1, էջ 73):

«Մեռելահարցուկ»-ում կոմս էմմանուելի մասին հեղինակն ասում է, որ «այս խեղճ մարդը դարձել էր մի ամենազգաստ ծանրաշափ—բարոյական ազգային բաների համար, որոնց և վերջինը, ամենաբերելի մեծ ազդեցություն էին զգրծում նրա վրա» (հատ. 1, էջ 258—259): Հենց այդպիսի դրուրազգացությամբ է հասկանալի, որ նա «նամակ»-ի հեղինակը:

Այս նմանություններն ունենալով հանդերձ, «նամակը», իհարկե, չի նույնանում «Մեռելահարցուկ»-ի հիշյալ գլուխների հետ: Բայց այս արտաքին նկարագրական նմանություններն էլ հաստատում են, որ թե՛ «Մեռելահարցուկը» և թե՛ «Կամսար խաչատուրյանի «նամակը» միևնույն ձևերի արդյունք են, նույն մտքի ու հոգու բխվածք: «նամակ»-ում առավելապես գեղարվեստական այլարանական նկարագրությամբ վերարտադրված են հայ ժողովրդի ազգային վիճակին վերաբերող նույն այն հոգեխոռված մտքերն ու խորհրդածությունները, որոնցով համակված են նախնականի 1859 թ. նշանավոր «նկատողությունը» հրապարակախոսական հոգվածը (տպված «Հյուսիսափայլ»-ի 1859 թ. Ն 10 ամսատետրակում), ինչպես նաև կոմս էմմանուելի «Հիշատակարան»-ի այն «Օրագրական թերթերը», որոնք տպագրված են «նկատողությունը»-ից հետո, Կամսար խաչատուրյանի «նամակից» առաջ՝ «Հյուսիսափայլ»-ում (1859, Ն 1) և այդ «նամակ»-ից հետո՝ 1860 թ. մայիսյան ու հունիսյան ամսատետրակներում:

<sup>1</sup> «Հյուսիսափայլ», 1860, Ն 1, էջ 70. Կամսար խաչատուրյան, «նամակ»:

<sup>2</sup> Տե՛ս Մ. Նախնական, ԵԺԺ, հատ. 1, էջ 255—256:

«Նամակ»-ում հեղինակը շրջադասության դուրս դալով գեպի «Հայաստանի ծոցը» և հասնելով «մի բարձր և սպիտակակալուստ սարի (իմա՝ Արարատի—Ա. Ա.) ստորոտքին», այստեղ ամենուրեք տեսնում է «մշտնջենավորության արժանի, թանկագին հնությունների» հնադարյան փանքերի ու եկեղեցիների ավերակները։ Այդ ավերակների մեջ ուրվականի նման շրջող, Հայաստանի ախուր պատմությունը մարմնավորող ծերուկ Մարան՝ իր տարաբախտության հիմնական աղբյուրը համարում է իր երկու երախտամոռ ու հայրադավ որդիների «անմիաբանությունը», նրանց հակազգային վարքն ու բարքը։

Մերոնի Մարան իր ավագ որդուն կոչում է եվհոգակորան, իսկ կրտսերին՝ Կարախան—շահ։ Մերոնի Մարան երկար ժամանակ իր հայրական պարտքն է համարել խրատել որդիներին՝ նրանց մեջ «նախկին սերը և միաբանությունը սերմանելու» համար։ «Բայց,—ասում է նա,—տեսնելով, որ խոսքերս ունայն և անօգուտ են լինում, ես այժմ իմ մահվան ժամուն չեմ կամենում ականատես լինել» նրանց «անմիաբանության գառն հետևանքներին»։ Վշտահար ծերունին հեռանում է տնից իր որդիների ապերախսությունը և սնմիաբանությունը տանել չկարողանալով («տեսնելով յուր տան մեջ... անմիաբանություն յուր երկու որդիների կողմից...», № 1, էջ 77)։ «...Բնության ոչ մի հոյակապ սենսարանը կարող չէ մխիթարել իմ ցավալից սիրտը, քանի որ իմ զավակների անմիաբանությունը և եղբայրատեցությունը օձի ատամների պես փորեքու է իմ սրտիս մեջ»։

Ակնհայտ է, որ այստեղ հեղինակին հուզող հիմնական հարցը ներազգային անմիաբանությունն է, որը դատապարտում է նա և համարում հայ ժողովրդի թուլության, նրա քաղաքական թշվառ վիճակի գլխավոր աղբյուրը։ «Ազգային միասնության» նախադրյանական գաղափարն, իհարկե, չպետք է նույնացնել և չի նույնանում կղերա-աղայական հոսանքի և բուրժուական իրերալիզմի դավանած «միաբանության» գաղափարին։ Բայց դա առանձին հարց է, որին մենք այստեղ ավելորդ ենք համարում անդրադառնալ, մանավանդ, որ այդ հարցը լայնորեն լուսաբանված է նախադրյանագիտական քավական հարուստ գրականության մեջ։

«Նամակը» վերջանում է նույն այդ հարցի շուրջը հեղինակի հետևյալ տխուր խորհրդածություներով։

«Եղբայր իմ Լուսիկ. ահա՛ իմ ճանապարհորդության հետևանքը ...Ո՛հ, գիտես դու, թե ինչքան կուրախանա այն ծերունին, անապատ ապառաժի վրա նստած, եթե լսի, որ նորա տառապանքը տեսնող և զգացող կա, և նորա որդիների աշխարհավեր անմիաբանության վերա առ ի սրտե ցավող»։

Այս «Նամակ»-ից մի քանի ամիս հետո, «Հյուսիսսփյալ»-ի 1860 թ. մայիս-հունիսյան համարներում ներազգային «անմիաբանության» տխուր հետևանքներին անդրադառնում է նաև Կոմս Էմմանուելը։ «Հիշատակարան»-ում Կոմս Էմմանուելի թղթակիցներից մեկը՝ Արրահամ Դիոսկորոսյան Բարկենյանցը, Ա. Խուդաբաշևի «Обозрение Армении» գրքի բնությանն անցնելուց առաջ գրում է. «Չկարծեք, թե իմ տխրությունը հառաջանում էր մի մասնավոր կամ անձնական ցավի, կամ վտանգի պատճառով, քս' լիցի... տխրությանս աղբյուրն է մեր առաջավելի ազգը. որի ապրած անկարագրելի «թշվառությունները», «մեր անմիաբանությանն և նախնային»»։

\*

Առաջին հայացքից դժվար է հասկանալ, թե ո՞վ է այդ «ծերուկ Մարան», որն ունի երկու որդի՝ եվհոգակորան և Կարախանշահ անուններով։

Հեղինակն այս երկու անունները գրում է ընդգծումով, ըստ երևույթին նպատակ ունենալով ընթերցողի ուշադրությունը գրավել այդ հնարովի, այլաբանական անունների խորհրդավորության վրա։ Ի թիվս այլ երկերի, այս «Նամակն» էլ իր նախադրյանական շնչով ու ոգով գրավում է մեր ուշադրությունը դեռևս 1954 թվականին, քայց այդ անունների ծածկագրական բնույթը և իմաստալից—բնութագրական նշանակությունը մեզ համար հասկանալի դարձավ միայն վերջերս, երբ նոր փորձ կատարեցինք բացելու դրանց փականքը, որն այնքան էլ բարդ չէ, որքան մեզ թվում էր առաջ։

Նորից ու նորից ուշադիր կարդալով այդ տարօրինակ և անժանոթ անունները՝ մենք կռահեցինք, որ այստեղ էլ նախադրյանը կիրառել է իր կերպարների անունների ծածկագրության այնպիսի ձև, որին հանդիպում ենք նրա մյուս երկերում, մասնավորապես «Հիշատակարան»-ում»։

<sup>1</sup> Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, ԵԼԺ, հատ. 1, էջ 476։

Նկատի ունենք մասնավորապես Գիրսաւ ծածկադիր անունը, որն, ինչպես հայտնի է, ստացվել է Սարգիս անվան տառերի վերադասավորումից: Այս «նամակ»-ի այլարանական կերպարների անուններն էլ կազմված են ծածկադրության նույն սկզբունքով, այն է՝ տվյալ անվան տառերի ուղղակի հակառակ դասավորությամբ, որով Մարա-ն ստացվել է Արամ-ից: Ուրեմն ծերուկ Մարան Արամ նահապետն է, և դա ապացուցվում է կերպարի այլարանական-սիմվոլիկ իմաստով ևս, քանի որ նա Արամ նահապետի վերաբերյալ Նալբանդյանի ունեցած հայացքի ճշգրիտ մարմնավորումն է: Իսկ Մարայի երկու որդիների՝ Եվհոդակուրան ու Կարախանշահ անունները ստացվել են հայ ազգի երկու իշխող դասերի հասարակ անունների խառն տառադասումից: Եվհոդակուրան-ը՝ հոգևորական, իսկ Կարախանշահ-ը՝ աշխարհական բառերն են: Եվ ինչպես որ ծերուկ Մարայի կերպարն իր էությունը ցայտուն կերպով մարմնավորում է Արամ նահապետի պատմա-ավանդական նշանակության նալբանդյանական ըմբռնումը, ճիշտ այդպես էլ Եվհոդակուրանի ու Կարախանշահի այլարանական կերպարները «նամակ»-ում մարմնավորում են հայ հոգևորական և աշխարհական դասերի նկատմամբ Նալբանդյանի ունեցած քննադական հայացքը, որ նա արտահայտել է նաև իր մյուս աշխատություններում («Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանը», «Մեռելահարցուկ», «Կոմս էմմանուելի հիշատակարան» երկերում, Գ. Այվազովսկու «Վարդապետարան»-ի քննադատությանը նվիրված հայտնի «նամակներ»-ում և մի քանի հրապարակախոսական հոդվածներում): Ծերուկ Մարայի ու նրա երկու «որդիների» Եվհոդակուրանի ու Կարախանշահի կերպարների վերլուծությունը լիովին հաստատում է մեր այս եզրակացությունը:

Իհարկե, Նալբանդյանն իր այս երկում բառացիորեն չի կրկնում նախնիքաց մի շարք գործերում իր ասածները: Բայց «նամակ»-ի բովանդակությունը, նրա էությունը, մտքերի ու տրամադրությունների ընդհանուր ուղղությունը լիովին հարազատ նալբանդյանական են: Նալբանդյանաշունչ բովանդակության հետ միասին, «նամակ»-ի ոճը, պատկերավորման այլարանական եղանակը. նկարագրության ու պատմելու ձևը, խոսքի ընդհանուր ուժը ևս ակնհայտորեն Նալբանդյանական են և առանձնապես հիշեցնում են ստեղծագործության այն ընդհանուր ոճը, որ նա կիրառել է «Կոմս էմմանուելի Հիշատակարան»-ում՝ մասնավորապես Կոմս էմմանուելի թղթակիցների (Ս. Շահբեգ, Աբրահամ Դիուսկորոսյան Բարկենյանց, Մեսրոպ Տիրատուրյան և այլն) «նամակներում», ուր գերակշիռ տեղ են գրավում այլարանությունն ու ակնարկման հնարանքը: Հիշենք, որ այդ հնարանքը՝ իբրև Նալբանդյանի գրելակերպի, ոճի առանձնահատկություն, առաջին անգամ բացահայտված է Ս. Գ. Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատոր մենագրության մեջ:

«Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանը» պատմա-քննական տեսության մեջ Նալբանդյանն ասում է, որ ինքն այստեղ ընթերցողներին ներկայացնում է «մեր ազգի ընդհանուր ավերությունը... մեր հոգևորների անգործությունը, խավառափրությունը, դատարկապորտությունը», «ասացինը նույնպես, — շարունակում է Նալբանդյանը, — թե ո՞ր աստիճան բարձիթողի արած էր մայրենի լեզուն՝ մեր Արամ ֆաշ նահապետի նվիրակներ...»<sup>1</sup>:

Հոգևորականության անկյալ վիճակի առնչությամբ և ի հակադրություն դրա՝ «Արամ ֆաշ նահապետի» մասին ազդային հպարտության զգացմունքով համակված հիշատակությունը լիովին համընկնում է Կամսար աղաւորությանի «նամակ»-ի բովանդակությանը՝ այն հատվածում, որտեղ «ծերունի Մարան» բնութագրվում է որպես Լրբեմի «Բազ զինվորական»: «Սորա դեմքը Լրբեմ էր արյունաներկ... հասակը բավական բարձր, որի Լրկայն ձեռները դադարել էին սուր և վահան կրել...: Նորա վերա հազուստը կարծիր էր տալիս նորա ֆաշ զինվորության մասին»<sup>2</sup>: Այնուհետև, երբ «Ծերուկ Մարան» ողբում է իր թշվառ վիճակը և դատապարտում իր անարժան որդիներին, վերջիններիս մասին ասում է. «նորա իմ ֆաշության անունը պիտի անմահացնեին աշխարհի վերա, բայց դորա, այդ որդիքս, ինչպես տեսնում եմ, ցավիս վերա ավելացնում են ցավ, այս ծերությանս ժամանակում...»<sup>3</sup>:

Հետագայում, այս «նամակ»-ից մոտ հինգ ամիս հետո, «Հիշատակարան»-ի ԺԳ գլխում (տպագրված 1860 թ. մայիսյան 5-րդ ամսատետրում) Կոմս էմմանուելը նույն տխուր մտածություններով անդրադառնում է «Արամ նահապետի սուրբ հիշատակին», այս անգամ արդեն առանց նրա անվան ծածկադրության: Կոմս էմմանուելին հուզող հարցն էլ այստեղ ըստ էության նույնն

<sup>1</sup> Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հատ. 2, էջ 220: Նույնը նաև «Հյուսիսափայլ», 1858, № 1:

<sup>2</sup> Տե՛ս «Հյուսիսափայլ», 1860, № 1, էջ 73—74:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 75:

է՝ ազդի բղբալի վիճակն ու նրա բարձրման հնարների ուղենշումը, թեև այստեղ նախնայանքն իր խորհրդածությունների ու մտքերի մարմնավորման համար չի դիմում «խորհրդավոր տեսիլներին»։ «Մեր ազգություն մերենան ջարդված է», — ասում է Կոմս Էմմանուելը և շարադրում իր հայացքը այդ «մերենային» «վերանորոգության» մասին, նրա իրականացման գլխավոր ուղին համարելով «լուսավորությունը», իսկ լուսավորության գլխավոր միջոցը՝ «բուն ազգային դրությունների» առկայությունը։ «Ազգային չենք ճանաչում այն գաղութը, ուր հրամայվում է խոսիլ այլ և այլ լեզուներով՝ սակավ երբեմն իսպաներեն»։ Ահա այս առնչությամբ Կոմս Էմմանուելն իսկույն ավելացնում է. «Թող շարժվին գերեզմանի մեջ մեր Արամ Նահապետի ոսկեբլթ... իրավունք ունի եղած հայ բանասերը, մինչ սորանից բանի տարի հառաջ գրում էր հետևյալ տողերը, նվիրված Արամ Նահապետի սուրբ հիշատակին»։ Այնուհետև բերված է մի ձոներգ՝ ի փառաբանություն Արամ Նահապետի «սիրական հայրենի բարբառի»։

Արդ բարձրացավ  
Հնության փոշուց,  
Հալթանակ կանգնեց  
Սիրական լեզուդ,<sup>1</sup>

ասված է այդ ձոներգում։

Այս մեջբերումներն ակնհայտ են դարձնում զաղափաբական այն կապը, որ կա Կոմս Արամ Խաչատրյանի ստորագրությունը կրող «Նամակի» և «Կոմս Էմմանուելի հիշատակարան օրագրական թերթի» միջև՝ Արամ Նահապետի նկատմամբ նախնայանքի ունեցած հայացքի խնդրում։ Մի դեպքում («Հյուսիսափայլ», 1860, N 1, հունվար, «Նամակ») նախնայանքն իր պատմահայրենասիրական մտորումները մարմնավորել է ծածկագիր այլաբանությամբ, ֆանտաստիկ ձևով, իսկ մի քանի ամիս հետո (1860, N 5, մայիս) նույն մտորումներն արտահայտել է համեմատաբար բացորոշ, առանց զաղանադրության ձևին դիմելու, Կոմս Էմմանուելի հրապարակախոսական խորհրդածությունների միջոցով։ Առաջին անգամ «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանը» հոդվածում (1858, նոյեմբեր) միան ամիս քանի տողով հիշում է Արամ Նահապետին, նրա «նվիրականը»՝ մայրենի լեզուն բարձրիմոլ արած «հոգևորների» անդործությունը, խաղաղամոլությունը և դատարկագործությունը դատապարտելով Դրանից մոտ մեկ և կես տարի հետո (1860, հունվար) նախնայանքը երկրորդ անգամ է անդրադառնում Արամ Նահապետին, բայց այս անգամ ավելի բնդարձակ և ոչ հրապարակախոսական պլանով։ Կոմսար Խաչատրյանի «Նամակ»-ում նախնայանքն ստեղծում է Արամ Նահապետի գեղարվեստական կերպարը, թող որ այն լինի այլաբանական ձևի մեջ, բայց դա գեղարվեստական կերպար է, որն արտահայտում է հայ ժողովրդի պատմական բախտի ողբերգությունը, և միաժամանակ նրա ազատասիրական ձգտումները։ «Նամակ»-ում ծերուկ Մարան, որպես հայ ժողովրդի պատմական կյանքի ողբերգությունը և ազատագրության զաղափարը մարմնավորող գեղարվեստական կերպար, հակադրված է իր երախտամոռ ու այլասերված, հայրենադրում «որդիներին»՝ սվնդակուրանին ու Կառախանջանին։ Վերջիններս նույնպես թեև այլաբանական, բայց տիպական կերպարներ են, որ գեղարվեստական բնդհանրացումով խոսացնում ու տեղադրվում են հայ հոգևորականության ու նրա արյունակից հայ աշխարհական դասի սոցիալական-դասային բնավորությունը, նրանց ռեակցիոն դիրքը հայ ժողովրդի կուլտուրական առաջընթացի և ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ։ Բազմափայլ ծերուկ Մարան (այսինքն՝ հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրությունը սիմվոլացնող Արամ Նահապետը) խորապես հիասթափված է իր Երկու «որդիներից» էլ, որոնք չեն արդարացրել իր հույսն ու սպասելիքները։ Նրանց այլասերվածություն և անմիաբանության հետևանքով Մարանի բազմադարյան, «հայրենական տունը» հիմնիվեր կործանվել, ավերակների է վերածվել, և այժմ այդ «ապարախտ ծերունին վերջին հուսահատության մեջ» իր Երեմիի փառքի կորստյան ողբն է անում՝ պատմելով «Երախտամոռ որդիների» անվայել վարքի և նրանց «անմիաբանության» աղետալի հետևանքների մասին։

Ծերուկ Մարան ամենից առաջ և ամենից ավելի պանդասովում է իր «անդրանիկ որդուց»՝ սվնդակուրանից ու դատապարտում նրան, որի այլասերությամբ է բացատրում նաև իր «կրրտսեր որդու» — Կառախանջանի անվայել վարքն ու բնթացքը և նրանց միջև եղած «անմիաբանությունն ու եղբայրատեղությունը»՝ աղետալի «ամենադառն հետևանքներով» հանդերձ։ Շատ հեռավոր անցյալում, «չորրորդ և հինգերորդ դարերի մեջ», — ասում է ծերունի Մարան, — ավաղ

<sup>1</sup> Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, ԵԼԺ, հատ. 1, էջ 451։

որդին «չափ քաղականին մխիթարեց իմ ծնողական սիրտը՝ յուր խոհեմ տնտեսությամբ»։ Այն ժամանակ «նորա ուշքը յուր տան բարեկարգության և բարեշինության վերա էր, հայրորեն հոգալով յուր կրտսեր եղբոր պիտույքը...»։ Բայց երկար չի տևում այդ. Եվհովակոբանը, այնուհետև, ամբողջովին վատասերվում ու ալյանդակվում է, մանավանդ «այս վերջին դարերում Եվհովակոբանը դարձել է մի ամբարիշտ և վատթար մարդ», — դառնացած ասում է ծերունին։ «Փոխանակ մի առողջարար կերակուրի», թույն ու մահադեղ է պատրաստում ինձ և յուր կրտսեր եղբորը. ...նորանոր աղետալի ցավեր է պատճառում ինձ՝ յուր բոլորովին անխոհեմությամբ, տմալությունով, անհոգությամբ և մանավանդ յուր վատարարությունով»։ «Փոխանակ իմ հոգ-դոջուն ձեռքիցս բռնելու և բարձրացնելու ինձ իմ ռած բնկած դրությունից, ևս առավել եղայրատեցությամբ աշխատում է դեպի կորուստյան խորխորատը՝ արացի զարկելով ներս ձգելու՝ Վերջապես բանի աշխարհս լավանում է, նա այնքան վատթարանում է... Աշխարհը զարթնում է, նա դեռևս քնած է, ասես թե մի էնդիմիոսյան բնով. ինչ որ ուրիշների համար լույս է, նորս համար՝ խավար, ինչ որ այլը ջանք են առնում ձեռք բերելու, նա անհոգությամբ կորուստանում է»։

Սվեդզակոբանի մասին ասված այս խոսքերն ըստ էության արդյոք նույնը չեն, ինչ ասում է Նալբանդյանը հայ հոգևորականության մասին Գ. Այվազովսկու «Վարդապետարանի» քննադատությանը վերաբերող իր «Նամականք»-ում, որոնք դրության ժամանակով էլ շատ մոտ են «Նամակ»-ին և անմիջապես հաջորդում են վերջինիս։ «Հոգևորը մեր անկիրթ և վայրենի... թշնամիք են լուսավորության, և բազում ուրեք շանթիք նդովից մտանին ի պայքար ընդ լուսաւորութեան։ ...Ժամանակն սրաթիւ, ոչ ընդ վայր ինչ թռչի ընդ գլխով ազգաց, և ամենին, որոց ի խելապատակս դուցի գործարան մտաց ընթացակից լինին յաւիտենական ծերունոյն։ Այլ հոգևորը մեր սնանկացեալ ի շնորհաց ժամանակին, վարձականաց քան թե հովուաց բերելով յանձինս զնամանութիւն, զանձանց և եթ խորհին, անհոգ զազդէն գնացեալ, որ ընդ հարուածովք բազդին զվերջին հեկեկեանս արտաքս ի կրծոց արձակէ։ Օտար լինելով ամենայն մարդկային բամբաս և դաստիարակութեանց, օտար են և ի փիլիսոփայութենէս... Հոգևորը մեր առ անձնական օգտի կամ մտրանալոյ յօտարէն զնշլին փառս՝ ի վաճառ հանէն զմեզ, դաւեն և մատնեն զմեզ, ոսոխանան և նզովեն զմեզ, մարանչեն և հալածեն զմեզ, ի վերջէ զազդն ամբողջ ինչ ոչ խղճահարեն կորուսանել, առ ի դիւտ բարեկենդանութեան կամ ի զովացումն փառասիրական ծարաւոյ, որոյց ըղձակալին լինին։ Հոգևորը, որոց պաշտոն է պաշտպան և պահապան կալ կրոնի յուրեանց, զանգալեն յօտար ուսմանս, մեծապես վնասակար մեզ, հայեցեալ ի պատմական իրողութիւնս ներկա ժամանակիս» (հատ. 1, էջ 11)։ «Եւ զինչ ասպաղա ազգի մերոյ ընկճելոյ, որոյ այսպէս իցեն հոգևորը, զի՛նչ յոյս ազգին, որ զօրհանապազ զավի և խարդախի յարանց զորս հայր ճանաչել ուսաւ ի դարուց՝ ժամանակաց»։ «...Մինչև ցե՛րբ ազգ հայոց զօհեցի դաւաճանութեանց, մինչև ցե՛րբ անգլիացին դիմախաւոր հոգևորը մեր»<sup>1</sup>։

Այս երկու քաղվածքներն իրենց էությամբ (իսկ տեղ-տեղ մինչև իսկ բառացի) ակնհայտորեն նման են և նույն հեղինակի մտքերի ու մտորումների արտահայտություններն են։ Եվ թվում է, թե այն, ինչ Նալբանդյանը «Հյուսիսսփայլ»-ի 1860 թ. հունվարյան համարում կամօտար խաչատուրյան ծածկանունով ասել է հոգևորականության մասին այլաբանորեն, նույնը մի փոքր փոխված վարիանտով, բայց այս անգամ հրապարակախոսական լեզվով ասում է մոտ մեկ ամիս հետո՝ կաթողիկոսին ուղղված վերոհիշյալ «Նամականք»-ում (Գ. Այվազովսկու «Վարդապետարան»-ի մասին)։ Հունվարյան «Նամակը» գրելիս, որպես Սվեդզակոբանի իրական ու թանձրացյալ նախատիպ Նալբանդյանը, ըստ երևույթին, նկատի է ունեցել «Վարդապետարան»-ի հեղինակին՝ Գաբրիել վ. Այվազովսկուն։

«Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանը» հոդվածում վերջին հարյուրամյակների ընթացքում հայոց ազգին վիճակված «ոգրալի գրությունը» Նալբանդյանը համարում է հետևանք ոչ միայն այն բանի, որ ազգն բնկել է «օտարի լծի տակ», այլև «մեր ազգի հոգևորների և մարմնավորների անդաստիարակության»<sup>2</sup> հետևանք։ Ապա ավելացնում է, որ «մուրինյանց թագավորության կործանվելուց հետո, օրեօր և՛ ս առաւել... թանձրանում է խավարը և ազգը համորեն բնկնում է մահաճման քեի մեջ»<sup>3</sup>։

<sup>1</sup> «Հյուսիսսփայլ», 1860, № 1, էջ 74—75։

<sup>2</sup> Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հատ. 2, էջ 313, 314։

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 186։

<sup>4</sup> Հարկ է ուշադրություն դարձնել այս արտահայտությանը՝ «մահաճման քեի մեջ», «Նամակ»-ում ասված է «էնդիմիոսյան քեի մեջ», որ նույնն է։

Հայոց ազգի այդ «ողբալի գրություն» պատճառների ու հանգամանքների գրեթե նույնանման նկարագրությունը կա Կամսար Խաչատրյանի «Նամակ»-ում: Բայց այստեղ հայոց ազգի «ողբալի գրություն», «արտասվելի վիճակի», նրա «ապարախտություն» մեջ հեղինակը «օտար լծից» առավել հանցավոր է հանաչում հայ «հոգևորներին» ու «մարմնավորներին»: Եվ եթե 1858 թվականի հողավածում նախադրյանը եվրոպական ազգերի առաջընթացից ամբողջ հայ ազգի ետ մնալու մասին է խոսում՝ տեղ-տեղ միայն առանձնացնելով «հոգևորներին և մարմնավորներին», ապա այստեղ («Նամակ»-ում) հայ ազգի հետամնացության համար հանցավոր է համարում ամենից առաջ հոգևորականությունը, ծերունի Մարայի «անդրանիկ որդուն»՝ Եվհու-հակոբունին:

Այս «Նամակ»-ում հեղինակի խորհրդածությունները մեզ հիշեցնում են Ս. Շահբեգի խորհրդածությունները Կոմս Էմմանուելի «Հիշատակարան»-ում՝ Ս. ք. Մանգինյանի «Մեղու»-ի աշխատակից Խաչակյանցի «Հրավիրակ հայրենասիրություն» մակագրով հողավածի» առիթով: Ակնհայտ է, որ երկու դեպքում էլ նույն հեղինակն է խորհրդածում՝ հակադրելով V դարի «խնկելի թարգմանիչներին» մեծագործությունը Հայաստանի լուսավորության գործում և իր ժամանակի անմխիթար, «արտասվելի» վիճակը: Մասնավորապես իր ժամանակի հայ հոգևորականության քննադատությունը երկու դեպքում էլ արված է նույն ոգով: Կարդալով Կամսար Խաչատրյանի «Նամակը» վերհիշում ենք «Ս. Շահբեգի մի քանի նկատողություններ» հայ հոգևորականության դատարկապորտության, աշխուժման թուլության, հակազգային ու հակաժողովրդական րենթացքի վերաբերյալ: Շահբեգի «Երազում» երեցած «երիտասարդի» և Խաչատրյանի «Նամակ»-ում պատկերված «ծերունի Մարայի» կերպարներն իրենց էությունով ու բնավորությամբ շատ նման են: Այդ մասին են վկայում հետևյալ զուգադրությունները.

Ս. ՇԱՀԲԵԳԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ»

«Ինձ թվեցավ, թե գտնվում եմ մի գեղեցիկ դաշտում, կանաչ առտի վերա, թեք ընկած մի ծառի տակ. առջևից վազում էր մի ֆաղցր և պայծառ վտակ» (հատ. 1, էջ 405): Տեսա, որ գալիս է հեռվից մի երիտասարդ մարդ, կրակահատակ և նիհար. տեսա որ շատ վաստակած հագիվ հազ փոխում էր ֆայլերը... բուրլունից համաբայ վայր ընկնելով՝ նստավ առտի վրա: Նրա կերպարանքը տխուր, և շատ յերվ նորա երիտասարդությանը, արդեն խորշոմը դրել էր նորա ճակատի վրա յուր կնիքը:

«Հարցասիրությունը բռնադատեց ինձ՝ մոտենալ այդ մարդուն... Սա ի՞նչ օտարոտի մարդ է, մտածեցի ես, արդյոք ի՞նչ է պատճառը, որ աշխարհից բոլորովին հեռացնում է մի քանիսին: Երբեք ես չեմ տեսնում անպատում, միայնություն մեջ»:

Ո. Խ. Շահբեգի «Երազի» «երիտասարդը» այն հարցին, թե՞ ո՞վ է նա՝

— Ես հայ եմ, — պատասխանեց, — և ավելի ոչինչ: ...Բողդոն իմ հայությունը շարժեք սիրտը և հոգին: Ես որդի եմ մի անբախտ ազգի, որ երբեմն ունեցել է յուր փառափառությունը, յուր հողը, օրենքը, սուրբ և դրոշակը, որ այս բոլորիս բնույթից մինչև բնույթից ամբողջ աշխարհի երեսին գտնվում է խղճալի վիճակի մեջ, զերի և ստույգ խավար նախապաշարմունքների և ամենևին անհոգ լուսավորության մասին»<sup>2</sup>:

ԿԱՄՍԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ»

«Երկար ճանապարհորդությունից հետո հասա ես մի բարձր և սպիտակակապար սարի ստորոտին...: Եվ այստեղ հանդիպա մի նոր, ...տեսարան. մի հալ ու մաշ եղած ծերունի. նստած քարածալի վրա, որ հագիվ թե կարողանում էր ոտի վերա պահել յուր մարմինը: Սորա դեմքը երևում էր արյունաներկ, ճակատը կնճած... հասակը բավական բարձր...» (X 1, էջ 73):

«Սորանից հեշտ էր եզրակացնել, որ այդ ամայի վայրում նստած ծերունուն վիճակված է մի դառն վատարախտություն:

Ես մոտեցա նորան և ասացի. հերի՛ք է, ո՞վ պատկանելի ծերունի, մի լար. թեթևացրու քո սրտի ցավը՝ պատմելով ինձ քո գլխի անցքը»:

Կամսար Խաչատրյանի «Նամակ» վերնագրով երկի մեջ Մերուկ Մարան ևս, ի պատասխան այն հարցին, թե՞ «Ո՞վ ես դու և ինչ է քո լացի պատճառը»: Սրտի խորից հառաչելով ծերունին խոսեց այսպես.

— Ես ազգով հայ եմ. անունս է Մերուկ Մարա. ունեմ երկու որդի, որ ինձ նման վիճակված են երկար կենդանություն...» և այլն:

<sup>1</sup> Տես Ս. Շահբեգի «Երազի», Երև., հատ. 1, էջ 370—381:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 408:

Այս «նամակ»-ում հանդիպող մի քանի արտահայտություններ—ոճեր, համանման հոգեվիճակներ, երբեմն մինչև իսկ բառացիորեն, հանդիպում ենք Նալբանդյանի մյուս «նամակ»—հոգեվածներում, Կոմս էմմանուելի «Հիշատակարան»-ում և «Ազգային թշվառություն» հոգեվածում։ Ահա, օրինակ, Գ. Այվազովսկու «Վարդապետարանի» քննադատությւնը նվիրված «նամակներ»-ում հեղինակն ասում է. «...սիրտ մեր լցաւ արեւմբ ի տեսանիւ աշօք բարօք զպատիւ և զփառս ազգին մերոյ և եկեղեցւոյ առաջաւոր կոխեալ» (հատ. 2, էջ 315)։ «նամակ»-ում ալեհեր ծերունի Մարան նույնպէս ողբալով իր ժողովրդի տարաբախտ վիճակը՝ ասում է. «...այս բաներս տեսանում եմ, սրտիցս արյուն է կտրում» (հատ. 1, էջ 76)։ «Հիշատակարան»-ի ԺԹ գլխում Կոմս էմմանուելն ասում է, որ ինքը թեև «ծիծաղում է» մի քանի թեթևամիտ օրագրերի և լրագրերի խելացնոր կարծիքների վերա», «բայց այդ ծիծաղը արտասուից դառն է մեր համար...»։ Իսկ քիչ հետո ավելացնում է. «Մեր սիրտը լցված է արյունով...» (հատ. 1, էջ 444)։ «Ազգային թշվառություն» հոգեվածում ևս նույն արտահայտությանն ենք հանդիպում. «այժմ մեր խեղճ, անտեր և անօգնական ժողովուրդը... փոխանակ արտասուի, արյուն է քամում աչքերից, երբ լաց է լինում...» (հատ. 1, էջ 105)։

Այդ նույն հոգեցունց խորհրդածությունները Նալբանդյանն արտահայտել է գրանից մոտ չորս և կես տարի առաջ գրված այս «նամակ»-ում, ուր հեղինակը Հայաստանի նվիրական վայրերում շրջագայելիս անհուն վշտով ականատես է լինում հնադարյան փառքի կոթողների, որոնք ավերակների կույտեր են՝ զրկված «ամենայն բարեշուքներից և պայծառութենից», «հնություն հիշատակարաններ մեր խեղճ պապերի վաստակով կառուցված», բայց այժմ «ընկել են... այսպիսի անարդանքի և անպատվության մեջ»։ «սարսափելի» տեսարան, ամենուրեք՝ «փոխանակ կենդանության՝ մեռելություն և անզգայություն...»։ Ականատես լինելով փառավոր անցյալի ավերմանը, հեղինակն ասում է, որ «արյունի արտասուք էին քալում աչքերս, տեսանելով մանավանդ, որ այնպիսի պատվական հնությունք և մեր մի քանի արթնաչան նախահարց գերեզմանները բարձիթողի էին արած ուրվականների ձեռքում»<sup>1</sup>։ Ծերուկ Մարան և Կոմս էմմանուելը իրենց տանջալից ապրումներն արտահայտում են գրեթե նույն բառերով, նույն ոճով, որովհետև երկուսի կրթքում էլ նույն վշտահար ու հայրենանվեր սիրտն է բաբախում։

Բայց շարունակենք զուգահեռ համեմատությունները այդ բանում է՛լ ավելի համոզվելու համար։

«Հիշատակարան»-ի Թ. գլխում Ս. Շահբեգն իր «երազում» տեսած երիտասարդին պատկերացնում է արտասովոր աչքերով. «Վերջին խոսքերն ասելու ժամանակ՝ դարձյալ վեր բարձրացրեց ձեռքերը և աչքերը, բայց սուր արտասուքով փայլում էին այս անգամ» (հատ. 1, էջ 496)։ «...Այստեղ ճեկեկեմք և արտասուք թափելով շարունակել նորան յուր խոսքերը։ Մի փոքրից հետո՝ մի սպիտակ թաշկինակով սրբելով արտասուքը, փոխված և ողբալի ձայնով հառաջ սարավ յուր պատմությունը» (հատ. 1, էջ 407). «...Ո՛հ, թեև շատ արտասուք րափեցի՝ բաժանվելով այն կտակից, բայց... նորա գրողը իմ արտասուքից շատ արյուն է րափել այդ կտակը վավերացնելու համար»։ Այնուհետև ասված է. «Այստեղ չկարողացա գիմանալ, որ շարտասվեմ։ ...Տեսնելով, որ այդպիսի բեմոջ սրտի տեր էր այդ մարդը» (հատ. 1, էջ 408)։

Կամսար Խաչատուրյանի «նամակ»-ում ևս հեղինակն փնթն իրեն պատկերում է խորապես դուրազացած ու արտասովոր աչքերով. «Ահա, սիրելի եղբայր Լուսիկ, իմ ճանապարհորդության տխուր և տրտում պատմությունը, գիտեմ, դա ոչ փոքր վիրավորելու էր քո բեմոջ սիրտը, պատճառ, դու կզգաս քո մեջ իմ դառն արտասուքը ևս, որ առկի պես ճոսում էին աչքերիցս, լսելով այս ծերունու տառապանքը և տեսնելով նորա խղճալի դրությունը» (1860, № 1, էջ 78)։

Մերունի Մարան ասում է. «ամորապարտ եղևով նստեցինք ուրիշների տներում վարձով» («Հյուսիսփայլ», 1860, № 1, էջ 75)։ Կոմս էմմանուելն իր «Հիշատակարան»-ում ասում է. «...Խնդրեինք վերացնել այն տղեղությունը, որոնց համար ամորապարտվում էինք օտարների առաջ» (հատ. 1, էջ 444)։ «Մեռելահարցուկ»-ի է գլխում Կոմս էմմանուելը «մեր արտասովալի ազգի» վիճակը նկատի ունենալով տխրությամբ խորհրդածում է. «Երևում է, որ մեր տեսանելու չէինք նախախնամություն այցելությունը այս ազգին հասած» և ապա նույն տրամադրությամբ նա հարցնում է. «բայց արդյոք պիտի տեսանեինք մեր որդիքը կամ թոռները, դժվար է հավատալ»<sup>2</sup>։ Հենց նույն տրամադրությամբ և նույնպիսի առիթով վշտահար ծերուկ Մարայի մասին խորհրդածելով՝ «նամակ»-ի հեղինակն ասում է. «ինչքան կուրախանա այն ծերունին...»

<sup>1</sup> «Հյուսիսփայլ», 1860, № 1, էջ 73։

<sup>2</sup> Ե՛լ թ, հատ. 1, էջ 256։

Լթև լսի, որ նորա տառապանքը տեսանող և զգացող կա, և նորա որդիների աշխարհավեր անմիաբանության վերա առ ի սրտե ցավող... որ մի օր Նախախնամությունը այցելություն առնե նոցա..., փարատելով այդ դժոխային ցավը»<sup>1</sup>։

Կարծում ենք, որ այսքանը բավական է համոզվելու համար, որ Կամսար Խաչատուրյանը Միքայել Նալբանդյանի «Հյուսիսափայլ»-յան ծածկանուններից մեկն է և որ այդ անունով 1860 թ. հունվարյան համարում հրապարակված «Նամակ» վերնագրով երկր մեծ ռեուլյուցիոնների գրական ժառանգության մինչ օրս անհայտ մնացած, ամենևին ոչ աննշան կշերից է, որն այսուհետև պետք է մտնի նրա ինքնությունը զեղարվեստական երկերի շարքը։

## НОВОНАЙДЕННАЯ СТРАНИЦА ТВОРЧЕСТВА МИКАЕЛА НАЛБАНДЯНА

Ас. АСАТРЯН

(Р е з ю м е)

Известно, что значительная часть произведений революционного демократа Микаела Налбандяна, опубликованная при его жизни, была подписана различными псевдонимами, некоторая часть которых (как, например, Парахот Цолакянц, Цатур Погосянц, Мартирос Сарафянц, Саркис Тер-Микаелян Варшамянц и др.) расшифрована армянскими советскими филологами (А. Г. Иоаннисян, Н. Мурадян).

Подытоживая результаты своих исследований последних лет, автор статьи приходит к заключению, что не все псевдонимы Налбандяна расшифрованы и что ряд его произведений был опубликован в «Юсисапайле» и «Мегу» либо без подписи, либо же был подписан различными псевдонимами. Автор пытается конкретными фактами подтвердить свой вывод о том, что аллегорический рассказ «Письмо», опубликованный в январском номере «Юсисапайла» за 1860 г. за подписью Камсара Хачатуряна, написан М. Налбандяном и что Камсар Хачатурян является одним из псевдонимов Налбандяна. К этому автор приходит на основании анализа содержания указанного произведения и исходя из его языковых и стилистических особенностей.

<sup>1</sup> «Հյուսիսափայլ», 1860, № 1, էջ 78։